ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<14>> ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 34-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 14-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի թիվ 14-րդ հերթական նիստի օրակարգը՝

1. Աբովյան համայնքի ավագանու 10.01.2020 թվականի թիվ 3-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
2. Աբովյանի համայնքապետարանի գույքագրման արդյունքների հաստատման մասին
3. Համայնքային գույքի անհատույց նվիրաբերության մասին
4. Աբովյան համայնքում 2021 թվականին ՝՝Տեղական տուրքեր և վճարումներ՝՝ սահմանելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<14>> ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 35-Ն

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 10.01.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և <<Նորմատիվ Իրավական Ակտերի Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով.

Համայնքի ավագանին որոշում է՝

Արարատի մարզի Աբովյան համայնքի վարչական բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները՝

-01.01.01.51 գործառնական դասակարգման կառավարման մարմինների պահպանում ծրագրի 4239 հոդվածից պակասեցնել 50000/հիսուն/ հազար դրամ գումար և 4111 հոդվածից պակասեցնել 1089000/մեկ միլիոն ութսունիննը/ հազար դրամ գումար և ուղղվածությունը տալ.

ա/ 01.01.01.51 գործառնական դասակարգման կառավարման մարմինների պահպանում ծրագրի

4214 հոդվածին 12000 /տասներկու/ հազար դրամ գումար՝ կապի ծառայության համար

4261 հոդվածին 35000/երեսունհինգ/ հազար դրամ գումար՝ գրենական պիտույքների համար

4823 հոդվածին 3000 /երեք/ հազար դրամ գումար՝ ավտոմեքենայի տեխ. զննման համար

բ/ 10.07.01.54 գործառնական դասակարգման սոցիալապես անապահով անձանց աջակցություն ծրագրի

4721 հոդվածին ավելացնել 200000/երկու հարյուր/ հազար դրամ գումար՝ հաշմանդամության նպաստ

4726 հոդվածին ավելացնել 150000 /մեկ հարյուր հիսուն/ հազար դրամ գումար՝ հուղարկավորության նպաստ

4729 հոդվածին ավելացնել 400000/ չորս հարյուր/ հազար դրամ գումար՝ սոց. անապահովների նպաստ

գ/ 11.01.02.51 գործառնական դասակարգման վարչական բյուջեի պահուստային ֆոնդ ծրագրի 4891 հոդվածին

ավելացնել 339000 /երեք հարյուր երեսունիննը/ հազար դրամ գումար, որպես պահուստային միջոց:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ

4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ

6. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍԱՐԳԱՍԱՐԻ ԳՅՈՒՂՊԵՏԱՐԱՆ * 04201558 * ԷԷ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<14>> ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 36-Ա

ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Աբովյան համայնքի համայնքապետարանի և մշակույթի տան գույքի անվանացանկը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Արարատի մարզի Աբովյան
Համայնքի ավագանու 2020 թվականի
դեկտեմբերի 14-ի թիվ 36-Ա որոշման

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՅԱԿ

N	ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՏ	ԳՈՒՄԱՐԸ	ՏԱՐԵԹԻՎ
1.	Տրանսֆորմատոր մեծ	1	250.000	1992
2.	Տրանսֆորմատոր փոքր	1	250.000	1993
3.	Նկար	2	Չի գնահատվում	1986
4.	Մշակույթի տուն	1	9.023000	1947
5.	Բաղնիքի շենք	1/94.4	1.086.197	1972
6.	Վարչական շենք	1	5.407.000	1963
7.	Գրադարանի շենք	1	739.000	1962
8.	Կինոյի խցիկ	1	580.000	1961
9.	Զրհան կայանի շենք	1	369600	1962
10.	Աղբյուր հուշարձան	1	Չի գնահատվում	1947
11.	Մայր առու	3կմ	Չի գնահատվում	1984
12.	Գյուղի գազաֆիկացիա /ստորգետնյա/	8կմ	Չի գնահատվում	1972
13.	Գերեզմանոցի ջրմուղ	400մ	Չի գնահատվում	1963
14.	Պարկի դարպասներ	1զույգ	30.000	1962
15.	Չիրկիզվող պահարան	1	100.000	1963
16.	Գյուղի գազաֆիկացիա օդային	3.7կմ	2205.000	2006
17.	Համակարգչային սեղա	1	30.000	2006
18.	Գյուղապետարանի ցանկապատ	47մ	183.000	2006
19.	Գյուղի գազաֆիկացիա օդային	1կմ	1800.000	2007
20.	Ոռոգման ջրատար	165մ	1958.000	2008
21.	Հուշարձան խաչքար	1	Չի գնահատվում	2010
22.	Պատճենահանման սարք Canon	1	101.000	2010
23.	Նկար	3	Չի գնահատվում	1986
24.	Նկար	2	Չի գնահատվում	1986
25.	Համակարգիչ և մոնիտոր	1	98.000	2013
26.	Համակարգչային աթոռ	1	10.000	2013
27.	Գրասենյակային սեղան դիմադիր սեղանով	1	81.000	2013
28.	Գրասենյակային աթոռ	1	25.000	2013
29.	Շերտավարագույր	20քմ	113.000	2013
30.	Աթոռներ /մետաղյա/	12	136.000	2013
31.	Համակարգիչ և մոնիտոր	1	110.000	2013
32.	Գրասենյակային աթոռ	1	65.000	2013
33.	Հեռուստացույց	1	110.000	2013
34.	Էլ. ջեռուցիչ /պառավոյի ատապլենիով/	1	20.000	2013
35.	Օդորակիչ	1	120.000	2013

Հավելված 1
ՀՀ Արարատի մարզի Աբովյան
Համայնքի ավագանու 2020 թվականի
դեկտեմբերի 14-ի թիվ 36-Ա որոշման

36.	Հեռուստացույցի տակդիր	1	49.000	2013
37.	Համակարգիչի պրոցեսոր	1	110.000	2013
38.	Համակարգիչ	1	85.000	2013
39.	Ալեհավաք	1	41.000	2013
40.	Տպիչ Canon	1	81.000	2013
41.	Գրասենյակային աթոռներ	8	162.000	2013
42.	Զգեստապահարան	1	65.000	2013
43.	Ջեռուցման համակարգ	1	522.690	2013
44.	Փողոցների գազաֆիկացիա /օդային/	կմ	729.000	2013
45.	Դռան ճաղավանդակ	1	Շենքի արժեքի մեջ	2014
46.	Պատուհանների ճաղավանդակ	8	Շենքի արժեքի մեջ	2014
47.	Գրասենյակային աթոռ	1	44.000	2014
48.	Հայկական դրոշ	1	49.000	2014
49.	Գերեզմանոցի հանգստի քար	1	753.000	2014
50.	Փողոցների գազաֆիկացիա /օդային/	կմ	1.000.000	2015
51.	Սառնարան	1	135.000	2015
52.	Գորգ	1	100.000	2015
53.	Գրասենյակային սեղան դիմադիր սեղանով	1	105.000	2015
54.	Գրապահարան	1	90.000	2015
55.	Համայնքային այգի	1	420.000	2015
56.	Մարզագույք	4	260.000	2016
57.	Փողոցների գազաֆիկացիա /օդային/	կմ	3300.000	2016
58.	Ճոճանակ	1	264.000	2016
59.	Նստարան	5	332.000	2016
60.	Էլեկտրական հեռակառավարման փական	1	375.000	2016
61.	Սահարան	1	275.000	2017
62.	Թենիսի դաշտ	1	162.000	2017
63.	Զգեստապահարան	1հատ	70.000	2017
64.	Բաց զգեստապահարան	1հատ	20.000	2017
65.	Դահլիճի աթոռ	90հատ	990.000	2017
66.	Ամբիոն	1հատ	32.000	2017
67.	Բեմի սեղան	1հատ	77.000	2017
68.	Աթոռ փայտից	8հատ	96.000	2017
69.	Բազմոց և երկու բազկաթոռներ	1հատ	240.000	2017
70.	Բաց զգեստապահարան /մշակույթի տան/	2հատ	28.000	2017
71.	Գրապահարան պատի մեջ	1հատ	32.000	2017
72.	Խաղասենյակի սեղան	4հատ	112.000	2017
73.	Շերտավարագույր	52քմ	234.000	2017
74.	Սեղան փոքր	7 հատ	112.000	2017
75.	Գրապահարան	1 հատ	47.000	2017

Հավելված 1
ՀՀ Արարատի մարզի Աբովյան
Համայնքի ավագանու 2020 թվականի
դեկտեմբերի 14-ի թիվ 36-Ա որոշման

76.	Տեսախցիկներ	8 հատ	400.000	2017
77.	Թենիսի սեղան	1 հատ	172.000	2017
78.	Նարդի	3 հատ	45.000	2017
79.	Շախմատ	6 հատ	60.000	2017
80.	Պատի շախմատ	1 հատ	50.000	2017
81.	Շախմատի ժամ	4 հատ	60.000	2017
82.	Աստիճան ալյումինից	1 հատ	75.000	2017
83.	Տաքացուցիչ	2 հատ	75.000	2017
84.	Օդը հովացնող սարք	4 հատ	236.000	2017
85.	Ծառայողական ավտոմեքենա <<HYUNDAI TUCSON>>	1հատ	3.875.000	2017
86.	Համակարգչային էկրան	1 հատ	58.000	2018
87.	Պատճենահանման սարք Canon	1հատ	142.000	2018
88.	Փողոց ավլող խոզանակ	1հատ	500.000	2019
89.	Բուժ. կետ	1հատ	480.779	1962
90.	Մանկապարտեզ	1հատ	14.511.122	2019
91.	Օդորակիչ	1հատ	180.000	2020
92.	Փոշեկուլ	1հատ	30.000	2020

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<14>> ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 37-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետով, հիմք ընդունելով 10.01.2020 թվականի Աբովյան համայնքի ավագանու թիվ 3-Ն որոշման՝ 2020 թվականի ֆոնդային բյուջեի ծախսային մասի 1-ին կետը և այն հանգամանքը, որ ՝՝Աբովյան համայնքի մանկապարտեզ՝՝ Համայնքային Ոչ Առևտրային Կազմակերպության համար ստորև նշված գույքերը խիստ անհրաժեշտ են.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացվող հետևյալ գույքերը՝

1.1. Չիրկիզվող պահարան – 1հատ – 100000 /մեկ հարյուր/ հազար դրամ արժողությամբ
1.2. Սալօջախ – 1հատ- 300000 /երեք հարյուր/ հազար դրամ արժողությամբ
1.3. Սեղան պողպատե – 2հատ- 80000 /ութսուն/ հազար դրամ արժողությամբ
1.4. Գրապահարան -1հատ-60000 /վաթսուն/ հազար դրամ արժողությամբ
1.5. Գրապահարան -1հատ-80000 /ութսուն / հազար դրամ արժողությամբ
1.6. Զգեստապահարան -2հատ-80000 /ութսուն / հազար դրամ արժողությամբ

Ընդհանուր 700000 /յոթ հարյուր/ հազար դրամ արժողությամբ, անհատույց նվիրաբերել ՝՝Աբովյան համայնքի մանկապարտեզ՝՝ Համայնքային Ոչ Առևտրային Կազմակերպությանը, այն լիիրավ տնօրինելու և օգտագործելու:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, abovyan_gp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 38-Ն

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ» ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով.

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնքի 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Աբովյան համայնքի ավագանու 10.02.2019 թվականի թիվ 46-Ն որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 2
Հաստատված Աբովյան համայնքի
ավագանու 14.12.2020թ. թիվ 38-Ն որոշման

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ» ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով.

Համայնքի ավագանին որոշում է՝

Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ.

բ) սույն կետի <<ա>>- ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ.

500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ.

1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ.

3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 50000 դրամ.

գ) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 դրամ.

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում

կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության

փոփոխություն, և, բացի սույն կետի < ա> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության , ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 2500 դրամ:

4) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 200000 դրամ:

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60000 դրամ:

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույտվության համար՝ օրացուցային տարվա համար 50000 դրամ:

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 9000 դրամ

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 20000 դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 45000 դրամ,

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 100000 դրամ:

բ) օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

մինչ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 9000 դրամ

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 20000 դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 45000 դրամ,

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական

շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 100000 դրամ:
8) Համայնքի տարածքում՝
բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
9) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
ա) հիմնական շինությունների ներսում՝
մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,
26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 դրամ,
50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ,
100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ,
200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000 դրամ,
500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50000 դրամ:
բ) ոչ հիմնական շինությունների ներսում՝
մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,
26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,
50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,
100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,
200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,
500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ:
10) Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.
գ) բաղնիքների /սաունաների/ համար՝ 200000 դրամ.
դ) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ.
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ.
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ:
11) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.
բ) թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ;
գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.
դ)սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ,
ե) համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ

գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ 375 դրամ,

զ)եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան՝ 150 դրամ:

12) Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 100000 դրամ:

13). Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ՝ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար յուրաքանչյուր մեքենայի համար սամանվում է՝ 10000 դրամ:

14. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և /կամ/ մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 500000 դրամ:

15) Սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի դրույքաչափերը կիրառվել են 0.5 գործակցով:

Տեղական վճարներ

16) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1000դրամ:

17) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար, տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարներ սահմանվում է՝ 10000 դրամ.

18) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 5000 դրամ:

19) Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ 1000 դրամ.

20) Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր ամսվա համար՝

ա) յուրաքանչյուր բնակչի համար 100 դրամ

բ)Համայնքում իրավաբանական անձանց աղբահանության վճարի չափ սահմանել հետևյալ սակագներով՝

1. Առևտրի(այդ թվում շուկաների) , հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ մատուցողներ – 50 դրամ/1քմ:
2. Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ-20 դրամ/քմ:
3. Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ -6 դրամ/քմ:
4. Կրթական,մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ - 3դրամ/քմ:

Սույն որոշումը ուժի մեջ կմտնի 2021 թվականի հունվարի 1-ից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Կ. ՄՈՒՐԱԴՅԱՆ